Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով թիվ ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/4ՏՀ ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

Մեկնարկ՝ «5» «ապրիլի» 2024թ.
Ժամը՝ 16:00

ք. Երևան

Ավարտ՝ «11» «ապրիլի» 2024թ.
Ժամը՝ 17:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան (հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)՝ Ա. Ավագյան

անդամներ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Մ. Ստեփանյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Լ. Զաքարյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Մ. Մալխասյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմակերպչական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Ա. Բաղալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/4ՏՀ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/4ՏՀ** ծածկագրով բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2024 թվականի ապրիլի 5-ին ժամը՝ 16:00-ին**:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	*Մ-10, Սևան-Մարտունի-Գեղարքունիք միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+000-կմ94+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն*	***30 399 825***

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1 Հայտեր են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից.

N	Մասնակիցների անվանումները	Էլ. փոստ
1	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	llcdorproject@mail.ru lil.poghosyan17@gmail.com
2	«Արխինէքս» ՍՊԸ	archineqs@mail.ru
3	«Սուֆետ» ՍՊԸ	sufet16@gmail.com
4	«Քարազարթ» ՍՊԸ	qarazart2010@mail.ru

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024 թվականի ապրիլի 10-ին 12:00-ին:

10. 04.2024 թվականին, ժամը 12:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, որում բացակայում էր հրավերով պահանջված նմանատիպ պայմանագրի պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ 10.04.2024թ-ին ընթացակարգը կասեցնել և առաջարկել մասնակցին ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

11. 04.2024 թվականին, ժամը 17:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

5. Տեղեկություն՝ ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/4ՏՀ ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին

5.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտում առկա անհամապատասխանությունը:

6. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

6.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Չափաբաժին 1 Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+000-կմ94+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություն

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«Սուֆետ» ՍՊԸ	11 250 000	2 250 000	13 500 000
2	«Արխինէքս» ՍՊԸ	12 760 000	0	12 760 000
3	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	20 000 000	4 000 000	24 000 000
4	«Քարազարթ» ՍՊԸ	25 000 000	0	25 000 000

6.2 Մասնակիցների հայտերի հաշվարկման ճշգրտությունը (տառերով, հայտում ներկայացված հայտերի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում են (ճիշտ են):

7. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/4ՏՀ ծածկագրով բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

7.1 **ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/4ՏՀ** ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Սուֆետ» ՍՊԸ-ին:

7.2 **ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/4ՏՀ** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի /սույն ընթացակարգի շրջանակում. անգործության ժամկետը սահմանվում է 10 օրացուցային օր/ և 36-րդ հոդվածների պահանջները:

7.3 Մերժել «Արխինէքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, այն է՝ Հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը, կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

8. Տեղեկատվություն՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումների, հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

8.1 Օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման

պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

8.2 Սույն ընթացակարգի վերաբերյալ հիմնավորումներ չեն տրվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ա. Ավագյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Մ. Ստեփանյան**	.....
	Լ. Զաքարյան	.....
	Մ. Մալխասյան	.....
	Ա. Խաչատրյան	.....
Քարտուղար՝	**Ա. Բաղալյան**	.....